# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 30.03.2017թ.-ի N 43 - Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 27.06.2017թ. ժամը $14^{00}$

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 30.03.2017թ.-ի N 43 - Լ հրամանի հիման վրա «Շամբ» 220կՎ ՕԳ թիվ 1-268 մետաղական հենարանների ներկման աշխատանքների բաց ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ <<ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/16>>

Մասնակցում էին հանձնաժողովի՝

**Նախագահող՝**

Հարություն Գնորգյան մատակարարման բաժնի պետ

**Անդամներ՝**

Վահե Յուզբաշյան «Նախագիծ» մասնաճյուղի տնօրեն

Հարություն Գրիգորյան կապիտալ շինարարության և շինվերանորոգման բաժնի պետ

**Քարտուղար՝**

Ռոմեո Ալբերտյան մատակարարման բաժնի պետի տեղակալ

## I. Հայտի բացման մասին

---------------------------------------------------------------------------------

(Հ.Գնորգյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց և որոշեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկներ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

- «Բիգ Էներգո» ՍՊԸ-ն՝ 27.06.2017թ., ժամը 12:35-ին , իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Կ. Ուլնեցու փող., 3-րդ փակ., 6շ. 7 բն. հեռ. 010 231 113
- «Առարքտեխ» ՍՊԸ-ն՝ 27.06.2017թ., ժամը 13:45-ին , իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ուլնեցու փող. 1շ. 15բն. , հեռ. 093 939 410
- «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ և «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ն(կոնսորցիում)՝ 27.06.2017թ., ժամը 13:50-ին իրավաբանական հասցե՝ ք. Հրազդան, Վանատուր 327 հեռ. 094001 044

2. Ընթացակարգի հրավերով սահմանված ծրարի կազմման և ներկայացման պահանջներին համապատասխանում է մասնակիցների կողմից ներկայացրած հայտը:

2.1 Մասնակիցների ծրարներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.2 Հաշվի առնելով, որ «Ա և Ա Քոնստրաքշն» և «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ների համատեղ գործունեության կարգով ներկայացրած հայտի Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը հաստատված է կոնսորցիումի միայն մեկ կողմի՝ «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ Մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության), և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Ա և Ա Քոնստրաքշն» և «Քիմպաշտպանություն ՕՏՄԻՍԿ» ՍՊԸ-ների հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.4 Մասնակիցների գնային առաջարկներն են. ( առանց ԱԱՀ):
«Առսարքտեխ» ՍՊԸ-146928090դր.
«Բիզ Էներգո» ՍՊԸ -147928090դր.

2.5 Մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.6 Գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Առսարքտեխ» ՍՊԸ-ին:

2.7 Հարցում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեին 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

2.8 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

2.9 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացություն ստանալու և «Առսարքտեխ» ՍՊԸ -ի կողմից համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու օրվա հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հարություն Գևորգյան

Վահե Ցուգրաշյան

Հարություն Գրիգորյան

Ռուբեն Ալբերտյան